ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-20/23

ք. Երևան «06» 05 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և <<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Ս. Չունգուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 72983220 (յոթանասուներկու միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուը այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Աստղիկ գրատուն>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Գ. Քոչարի 21
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Յունիբանկ», «Օպերա» մ/հ , Հ/Հ 24137009632300
Հ/Հ 900011005130	ՀՎՀՀ 01505177
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ս. Հունգուրյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«06» 05 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-20/23 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը*
1	22111110-47	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2» 1-ին մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ես և շրջակա աշխարհը» /2-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղ.՝ Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 2-րդ դասարանի աշակերտների համար: Ելնելով տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչից և ծրագրից՝ դասագիրքն իր մեջ պետք է ամփոփի բնագիտական և հասարակագիտական բնագավառները, ընդհանրական պատկերացում տալով շրջապատող աշխարհի երևույթների, դրանց պատճառների, հետևանքների, փոխկախվածության մասին: Դասագրքի թեմաները պետք է միտված լինեն աշակերտի մեջ ձևավորելու գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի, ընդլայնել երեխայի պատկերացումները շրջակա աշխարհի հետ, ճանաչել իր բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները ուսումնասիրելու շնորհիվ ծանոթանալ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորել օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք բերել հաղորդակցական հմտություններ: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները պետք է արժեքավոր լինեն որպես հենք՝ բարձր դասարաններում ուսումնասիրվող բնագիտական առարկաների յուրացման համար: Դասագիրքն պետք է ապահովի չափորոշչով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորումը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստի թուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4	հատ	4976	840	4 179 840	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				Էջերի քանակը՝ 80 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմի գույները՝ 4+1 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ					
2	22111110-48	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2» 2-րդ մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ես և շրջակա աշխարհը» /2-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղ.՝ Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 2-րդ դասարնի աշակերտների համար: Ելնելով տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչից և ծրագրից՝ դասագիրքն իր մեջ պետք է ամփոփի բնագիտական և հասարակագիտական բնագավառները, ընդհանրական պատկերացում տալով շրջապատող աշխարհի երևույթների, դրանց պատճառների, հետևանքների, փոխկախվածության մասին, ինչպես նաև հասարակության կառուցվածքի և փոխհարաբերությունների մասին: Դասագիրքը պետք է ներառի «Բնությունն իմ շուրջ» (Երկրագնդի մյուս բնակիչները, փոփոխությունները բնության մեջ), «Առողջություն և անվտանգություն» թեմաները: Թեմաները պետք է միտված լինեն. աշակերտի մեջ ձևավորելու պատկերացումը բնության, կենդանական աշխարհի, բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, դրանցում մարդու դրական և բացասական դերի, մարդու կյանքում բնության, բույսերի ու կենդանիների դերի ու նշանակության մասին ամփոփ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների փոխանցմանը, դրանց հանդեպ պատասխանատվության և խնայող վերաբերմունքի ձևավորմանը,ինչպես նաև՝ դպրոցում և տանը անվտանգության կանոնների, առողջ սննդի, սննդամթերքի ոչ ճիշտ օգտագործման վտանգների և դրանցից խուսափելու միջոցների իմացությանը, սեփական մարմնի խնամքին և առողջությանը հետևելու, մարմնամարզությամբ զբաղվելու կարևորությունը գիտակցելուն, վնասակար սովորություններից, վարակներից խուսափելու հարցում մաքրակենցաղ ապրելակերպի դերը գիտակցելուն և պատասխանատու վարքագծի ձևավորմանը: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները պետք է արժեքավոր լինեն որպես հենք՝ բարձր դասարաններում ուսումնասիրվող բնագիտական և հասարակագիտական մյուս առարկաների յուրացման համար: Դասագիրքն պետք է ապահովի զանազան մեթոդների կիրառում և բազմաբնույթ գործնական աշխատանքներ, որոնք ապահովում են չափորոշչով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորումը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24	հատ	4976	860	4 279 360	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				Տեքստի թուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 88 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմի գույները՝ 4+1 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ					
3	22111110-62	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 3» 1-ին մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ես և շրջակա աշխարհը» /3-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղ.՝ Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 3-րդ դասարնի աշակերտների համար: Ելնելով տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչից և ծրագրից՝ դասագիրքն իր մեջ պետք է ամփոփի բնագիտական և հասարակագիտական բնագավառները, ընդհանրական պատկերացում տալով շրջապատող աշխարհի երևույթների, դրանց պատճառների, հետևանքների, փոխկախվածության մասին, ինչպես նաև հասարակության կառուցվածքի և փոխհարաբերությունների մասին: Դասագիրքը պետք է ներառի «Ես և իմ շրջապատի մարդիկ», «Ինչպես եմ կազմակերպում իմ կյանքը», «Մեր առողջությունը» թեմաները: Թեմաները նպատակ ունեն երեխաների մեջ ձևավորել այն գիտակցումը, որ իրենք բնության և հասարակության մասնիկ են, սովորեցնել զանազանել մարդկանց միջև գոյություն ունեցող տարիքային, աշխատանքային սեռային տարբերությունները: Օգնել գիտակցել և արժևորել ընկերական հարաբերությունների դերն իրենց կյանքում, կարողանալ ուսումնական գործընթացում և խաղերի ժամանակ ստեղծել փոխօգնության և վստահության հարաբերություններ դասընկերների հետ: Հասկանալ իրեն շրջապատող մարդկանց տարբեր դերերի և աշխատանքների կարևորությունը, հիմնավորել դրանց փոխկախվածությունը: Երեխաների մեջ իրենց առօրյան կազմակերպելու, գործերը, հանգիստը, պարտականությունները հստակեցնելու գիտելիքներ և ունակություններ ձևավորել: Սովորեցնել օրվա ռեժիմ կազմել, պլանավորել ժամանակը և գործունեությունը:Նախնական գիտելիքներ տալ մարդու օրգանների, օրգան համակարգերի և դրանց որոշ գործառույթների մասին: Օգնել գիտակցել հիվանդությունների կանխարգելման նշանակությունը: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները պետք է արժեքավոր լինեն որպես հենք՝ բարձր դասարաններում ուսումնասիրվող բնագիտական և հասարակագիտական մյուս առարկաների յուրացման համար: Դասագիրքն պետք է ապահովի զանազան մեթոդների կիրառում և բազմաբնույթ գործնական աշխատանքներ, որոնք ապահովում են չափորոշչով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և	հատ	6807	820	5 581 740	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				արժեհամակարգի ձևավորումը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստի թուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 90 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմի գույները՝ 4+1 Կազմարարություն՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա					
4	22111110-63	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 3» 2-րդ մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ես և շրջակա աշխարհը» /3-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղ.՝ Ն.Թորոսյան, Լ.Ալեքսանյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսվում է տարրական դպրոցի 3-րդ դասարնի աշակերտների համար:Ելնելով տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչից և ծրագրից՝ դասագիրքն իր մեջ պետք է ամփոփի բնագիտական և հասարակագիտական բնագավառները, ընդհանրական պատկերացում տալով շրջապատող աշխարհի երևույթների, դրանց պատճառների, հետևանքների, փոխկախվածության մասին, ինչպես նաև հասարակության կառուցվածքի և փոխհարաբերությունների մասին: Դասագիրքը պետք է ներառի «Երկիր մոլորակը», «Տարվա եղանակներ», «Անվտանգությունը մեր շրջապատում» թեմաները:Թեմաները նպատակ ունեն նախնական գիտելիքներ տալ աստղային երկնակամարի, Արեգակնային համակարգի, մոլորակների, Երկրի պտույտի և դրանով պայմանավորված պարբերական փոփոխությունների մասին: Գաղափար տալ ձգողական ուժի մասին,երեխաներին օգնել ճանաչել բնության մեջ կատարվող պարբերական փոփոխությունները, իմանալ տարվա եղանակները և դրանց ամիսները: Գիտելիքներ տալ տարվա տարբեր եղանակներին բույսերի և կենդանիների հետ կատարվող փոփոխությունների մասին: Խթանել նկարագրական հմտությունները՝ խրախուսելով նկարագրել, թե ինչպես է մարդն արձագանքում տարվա եղանակների փոփոխությանը,ծանոթացնել շրջապատում եղած վտանգներին, ձևավորել դրանցից խուսափելու վարքագիծ: Ծանոթացնել երկրաշարժի դեպքում ապահովության կանոններին և ձևավորել այդ աղետի ժամանակ կողմնորոշվելու հմտություններ: Ամրապնդել թեմայի ընթացքում սովորած անվտանգության կանոնները: Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները պետք է արժեքավոր լինեն որպես հենք՝ բարձր դասարաններում ուսումնասիրվող բնագիտական և հասարակագիտական մյուս առարկաների յուրացման համար: Դասագիրքն պետք է ապահովի զանազան մեթոդների կիրառում և բազմաբնույթ գործնական աշխատանքներ, որոնք ապահովում են	հատ	6807	880	5 990 160	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				չափորոշչով սահմանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորումը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստիթուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 78 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմի գույները՝ 4+1 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ					
5	22111110-71	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 4» 1-ին մաս	ՀՀ, «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ	«Ֆիզիկական կուլտուրա» /4-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղ.՝ Վ.Առաքելյան, Գ.Ծառուկյան, Ֆ.Ղազարյան, Յու.Գրիգորյան Բովանդակային չափանիշներ Հիմք ընդունելով ''Ֆիզիկական կուլտուրա'' առարկայի չափոփոշիչ ծրագիրը, դասագրքում պետք է ներառվեն գիտելիքների հիմունքներ առողջ ապրելակերպից, ֆիզիկական կուլտուրայի և օլիմպիական խաղերի պատմությունից, ինչպես նաև մարմնամարզությունից և աթլետիկայից: Առաջնորդվելով սովորողների առողջության ամրապնդման կենսական պահանջով՝ դասագրքում պետք է ներառված լինի «Առողջ ապրելակերպ» բաժինը, որը երեխաներին կգինի արժեքավոր գաղափարներով ՝պահպանելու և ամրապնդելու սեփական առողջությունը,լինել կարգապահ, պարտաճանանչ և օրինակելի: Նկատելի է,որ այդ բոլորը նրանք ձեռք կբերեն պահպանելով ռեժիմը և շարժողական ռեժիմը, կատարելով նախապարապմունքային մարմնամարզություն, հարթաթաթության, կեցվածքի ձևավորման, տեսողության պահպանման վարժություններ: Դպրոցականները պատկերացում կունենան սիրտ-անոթային և շնչառական համակարգերի վրա ֆիզիկական վարժությունների ներգործության մասին: Ծրագրային պահանջ է, որ սովորողները ճանաչեն մեր օլիմպիական չեմպիոններին՝ Հրանտ Շահինյանին, Ալբերտ Ազարյանին, Վլադիմիր Ենգիբարյանին և Իգոր Նովիկովին, որոնց մարզական սխրանքները յուրաքանչյուր երեխայի մոտ կառաջացնեն հպարտության և ազգային արժանապատվությանզգացմունքներ: Երեխաները այս դասարանում կշարունակեն ծանոթանալ մարմնամարզության պատմությանը, կսովորեն կատարել տարբեր հրամաններ, շնչառական ռիթմիկ մարմնամարզական վարժություններ, սողանցել, մագլցել, հաղթահարել արգելքներ: Ընդհանուր զարգացնող վարժությունները ներկայացված են պարզ, երեխաները դրանք կարող են կատարել օրվա բոլոր ժամերին, տարվա բոլոր եղանակներին,բացօթյա պայմաններում և տանը: Դասագրքում ներկայացված է, որ աթլետիկական վարժությունները բաղկացած են մարդու բնական շարժումներից, քայլքից, ցատկից, վազքից և	հատ	33514	780	26 140 920	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				նետումներից: Երեխաները կսովորեն տեխնիկապես ճիշտ կատարել արագ և դանդաղ վազք, հեռացատկել, բարձրացատկել, նետել հեռավորություն և նշանակետին: Երեխաները այս բոլորը հեշտ կյուրացնեն, քանի որ այդ շարժողական գործողությունները ներկայացված են պատկերազարդ նկարներով: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստիթուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 64 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմի գույները՝ 4+1 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ					
6	22111110-72	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 4» 2-րդ մաս	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ, ՀՀ	«Ֆիզիկական կուլտուրա» /4-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղ.՝ Վ.Առաքելյան, Գ. Ծառուկյան, Ֆ.Ղազարյան Յու. Գրիգորյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի երկրորդ մասը պետք է կազմի առաջին մասի տրամաբանական շարունակությունը;Հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագիրը և առարկայի առաջին մասում զետեղված նյութերը, դասագրքի երկրորդ մասի բովանդակության մեջ հարկավոր է ընդգրկել շարժախաղեր, ֆուտբոլ, շարժողական ընդունակություններ, լող, դահուկասահք: Շարժախաղեր բաժնի յուրացումը թույլ կտա երեխաներին տիրապետել բազմիպիսի շարժողական կարողությունների և հմտությունների: Երեխաները կսովորեն թե ինչպես կազմակերպել և խաղալ շարժախաղեր, որոնք թույլ կտան շփվել ընկերների հետ, միասին մրցակցել, հետաքրքիր ժամանակ անցկացնել, կհասկանան, որ պետք է լինել ազնիվ,կարգապահ և ընկերասեր: Ֆուտբոլ բաժնում երեխաները կծանոթանան ֆուտբոլի պատմության և զարգացման տարեգրության հետ, կտիրապետեն ֆուտբոլ խաղի տարրերին՝ կասեցնել, վարել, հարվածել գնդակը: Շարժողական ընդունակություններ բաժինը պետք է հնարավորություն ընձեռի սովորողներին պատկերացում կազմելու մարդու շարժողական ընդունակությունների՝ արագաշարժության, դիմացկունության, ճարպկության, ճկունության, մկանային ուժի, հավասարակշռության մասին: Շարժողական ընդունակությունների մշակումը թույլ կտա երեխաներին ձեռք բերել անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն: Դասագրքում կտրվեն այդ ընդունակությունները մշակելու պատկերազարդ, մատչելի վարժություններ, կձևավորվեն հմտություններ, այդ ընդունակությունները որոշելու թեստային վարժություններ Լող բաժնում կընդգրկվեն այնպիսի ուսուցողական վարժություններ, որոնք կնպաստեն, որպեսզի երեխաները ծնողների և ուսուցչի	հատ	33 514	800	26 811 200	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				օգնությամբ կսովորեն լողալ: Դահուկասահք բաժնում երեխաները կծանոթանան դահուկասահքի վերելքներին, վայրէջքներին, արգելակումներին: Դասագիրքը կօգնի երեխաներին ինքնուրույն կատարել առավոտյան մարմնամարզություն, ֆիզկուլտուրային պարապմունքներ, ֆիզկուլտ դադարներ, հսկել բեռնվածությունը, կատարել ստուգողական վարժություններ: Այդ ձեռքբերումները անշուշտ կտեղափոխվեն առօրյա կյանք, կնպաստեն երեխաներին հարմարվելու տարբեր սոցիալական միջավայրերին, կհարստացնի դպրոցականների արժեհամակարգը, կնպաստի նրանց ինքնազարգացմանը և ինքնադրսևորմանը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16.5 x 24 Տեքստիթուղթը՝ 80գր, օֆսեթ Տեքստի գույները՝ 4 + 4 Էջերի քանակը՝ 68 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ Կազմի գույները՝ 4+1 Կազմարարություն՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ					

1-6- րդ չափաբաժինների համար

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը,

Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից **բաշխման ցուցակի**:

Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ս. Հունգուրյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հաշիվ-թերթի	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2», 1-ին մաս	1847	234	531	420	120	660	435	22	418	170	60	59	4976
2	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2», 2-րդ մաս	1847	234	531	420	120	660	435	22	418	170	60	59	4976
3	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 3», 1-ին մաս	2893	470	713	450	80	620	749	22	540	90	60	120	6807
4	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 3», 2-րդ մաս	2893	470	713	450	80	620	749	22	540	90	60	120	6807
5	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 4», 1-ին մաս	9858	1468	1104	2970	1800	3770	2757	3629	3645	580	1424	509	33514
6	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 4», 2-րդ մաս	9858	1468	1104	2970	1800	3770	2757	3629	3645	580	1424	509	33514
	ԸՆԴԱՄԵՆԸ	29196	4344	4696	7680	4000	10100	7882	7346	9206	1680	3088	1376	90 594

* ՀՀ ԿԳՄՍՆ ենթակա ուսումնական հաստատությունների դասագրքերը հանձնվում են Երևանի թիվ 112 ավագ դպրոց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

_____Ս. Չունգուրյան

Հավելված N 2
«06» 05 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՄՆՄԱՊՁԲ-20/23 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում .												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր /մինչև 30-ը/	Ընդամենը
1	22111110-47	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2», 1-ին մաս								4 179 840	4 179 840	4 179 840	4 179 840	4 179 840	4 179 840
2	22111110-48	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 2», 2-րդ մաս								4 279 360	4 279 360	4 279 360	4 279 360	4 279 360	4 279 360
3	22111110-62	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 3», 1-ին մաս								5 581 740	5 581 740	5 581 740	5 581 740	5 581 740	5 581 740

4	22111110-63	Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը 3», 2-րդ մաս								5 990 160	5 990 160	5 990 160	5 990 160	5 990 160	5 990 160
5	22111110-71	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 4», 1-ին մաս								26 140 920	26 140 920	26 140 920	26 140 920	26 140 920	26 140 920
6	22111110-72	Դասագիրք «Ֆիզիկական կուլտուրա 4», 2-րդ մաս								26 811 200	26 811 200	26 811 200	26 811 200	26 811 200	26 811 200
ԸՆԴԱՄԵՆԸ										72 983 220	72 983 220	72 983 220	72 983 220	72 983 220	**72 983 220**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

_____Ս. Չունգուրյան